



MESSAGGIO AUGURALE
DI S.S. PAPA PAOLO VI
PER IL III° CENTENARIO DELLA NASCITA
DEL VEN. MECHITAR

È per Noi motivo di vivo compiacimento, a conclusione dei festeggiamenti indetti per il terzo centenario della sua nascita, rievocare la grande figura del Ven. Mechitar, gloria della Chiesa Armena, artefice di unità e pace.

Nato a Sebaste, in Armenia Minore, il 7 febbraio 1676, allorché difficoltà di ogni genere minacciavano clero e popolo, ed avviato fin da giovane alla scuola delle mondane rinunce, ed incoraggiato dalla Madonna del convento di Sevan, Mechitar rispose con gioia alla chiamata divina, che lo destinava apostolo e testimone di un contrastato ministero per l'unità delle Chiese.

Costretto a continui spostamenti dovuti a dolorosi eventi storici, ma molto più alla sete di conoscere meglio la volontà di Dio, Mechitar rispose all'appello fino a divenire uno strumento di autentico e genuino «apostolato ecumenico».

Mechitar già sacerdote, insieme con i suoi primi seguaci, dopo varie soste in diverse parti dell'Asia Minore, subì la distruzione del primo convento di Metone in Morea, approdò fi-

nalmente a Venezia, dove il Senato nel 1717 concesse a lui e alla sua comunità l'isola lagunare di San Lazzaro, che divenne come un lembo dell'amata Armenia, dove si fermò definitivamente e dove morì il 27 aprile 1749 in odore di santità.

Il Ven. Mechitar si trovò ad operare in un momento particolare della storia del suo Popolo, quando opposte fazioni minacciavano la genuina fede della Chiesa Armena minandone la comunione ecclesiale, e Pietro, che il vostro storico Agatangelo (sec. IV) chiama «Rocca di stabilità di tutte le Chiese», per bocca dei suoi successori, era impegnato a salvare la trascendenza e a dirigere gli uomini e il mondo verso Dio. In armonia con gli insegnamenti dei Santi Padri armeni e delle tradizioni patrie, e bramoso di trasmettere al suo popolo le ricchezze spirituali e culturali dell'Occidente cristiano, Mechitar, magnifico esponente del vero e fattivo amor patrio e nazionale, seppe essere faro e richiamo nella fede, nella cultura e nell'azione, nonostante l'incomprensione e la chiusura del suo tempo ad ogni apostolato ecumenico.

Mechitar, tenace e geniale realizzatore di opere e di iniziative feconde, fu appunto un precursore nei disegni di Dio, perché sentì imperiosa la sollecitudine di un'invocazione ancora inascoltata: «Ut omnes unum sint» (Gv. XVII, 21), come si desume dalla preghiera da lui composta per l'unità della Chiesa.


L'azione incisiva del Ven. Mechitar, tutt'altro che infeconda, preparava da lontano quel movimento di carità all'interno di tutta la Chiesa e, giunta viva fino a noi per il costante ministero dei suoi Figli, i Padri Mechitaristi, fa sì che tutti i figli della sua Nazione, ad esempio dei Cristiani di oggi, si sentano fratelli, tutti ugualmente figli dello stesso Padre celeste.

Il voto che vogliamo esprimere in questa lieta circostanza è quello di vedere i due rami della benemerita Congregazione Mechitarista sempre più uniti fino a formare come una sola efficiente famiglia.

Desideriamo Noi pure partecipare, in qualche modo, alle solenni manifestazioni tre volte centenarie, con il presente messaggio, per onorare, in quest'ora della Chiesa, l'insigne Uomo di Dio, consci come siamo che il suo insegnamento echeggerà più che mai attuale alle Chiese sorelle e al mondo in ascolto!

Ausplicando, pertanto, che l'occasione celebrativa richiami e propaghi più universalmente il monito evangelico all'unità dell'ovile di Cristo, impartiamo di cuore al Cardinale Johannes Willebrands, a S. B. il Patriarca Ghedighian, agli Abati Generali e ai Membri delle due venerande Comunità Mechitariste e a quanti parteciperanno alle celebrazioni indette, la Benedizione Apostolica.

Da Castel Gandolfo, 8 Settembre 1977



Paulus P.P. VI.

Գ Ի Ր

ՄԱՂԹԱՆՔԻ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
Ն. Ս. ՊՕՂՈՍ Զ. ՍՐԲԶ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԷՆ
ԵՐՆՇ. ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻԻ
ԾՆՆԴԵԱՆ Ք. ԴԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Խորին համութեան առիթ է Մեզի համար, ծննդեան երեքհարիւրամեակին նուիրուած հանդիսութիւններուն փակման առիթով, ոգեկոչել մեծ դէմքը Երնշ. Մխիթարի, որ պարծանքն է Հայ Եկեղեցւոյ եւ սատարիչ միութեան ու խաղաղութեան:

Ծնած Սերաստիա, Փոքր Հայքի մէջ, 1676ի Փետրուար 7ին, մինչ ամէնագոյի խոչընդոտներ կը սպառնային կղերին ու ժողովուրդին, Մխիթար՝ մանուկ հասակէն դարբնուելով աշխարհէ հրաժարման դպրոցին մէջ ու քաջալերուած Սեւանայ վանքի Աստուածածնէն, հրմուագին պատասխանեց աստուածային կոչումին, որ զինք կը սահմանէր դառնալու առաքեալ եւ վկայ՝ Եկեղեցիներու միութեան առաջնորդող ընդդիմադրեալ պաշտօնին:

Պատմական տխուր իրադարձութիւններու հետեւանքով՝ մշտաւեւ տեղափոխութիւններու պարտադրուած, բայց մանաւանդ մըղուած Աստուծոյ կամքը լաւագոյն կերպով ճանչնալու ծարաւէն, Մխիթար պատասխանեց այդ կոչին, իրաւ ու հարազատ գործիք մը դառնալու աստիճան «Էփումնիք առաքելութեան»:

Մխիթար, արդէն իսկ վարդապետ, յետ դեգերելու, իր առաջին հետեւորդներով Փոքր Ասիոյ զանազան վայրերը եւ Մոռէական Մեթոնի իր առաջին վանքին քանդման եմբարկուելու, հուսկ՝ իր ոտքը դրաւ Վենետիկի ափումքին, ուր Երեւոյտը, 1717ին, իրեն

եւ իր հասարակութեան տրամադրեց լմակի Սուրբ Ղազար կղզին, որ դարձաւ սիրելի Հայաստանի մէկ շերտը, ուր վերջնականապէս կանգ առաւ ան, ուր եւ վախճանեցաւ, 1749ի Ապրիլ 27ին, սրբութեան բոյրով:

Երնշ. Մխիթար գործեց իր ժողովուրդի պատմութեան իւրայատուկ մէկ պահուն, երբ ընդդիմակաց հոսանքներ կը սպառնային Հայ Եկեղեցւոյ հարազատ հաւատքին, վտանգելով անոր Եկեղեցական հաղորդակցութիւնը, եւ Պետրոս՝ գործեր պատմագիրն Ագաթանգեղոս (Դ. դար) կը կոչէ «Վէմ հաստատութեան ամենայն Եկեղեցեաց»¹, իր յաջորդներուն բերանով, ստանձնած էր փրկել գերանցականութիւնը եւ ուղղել մարդիկն ու աշխարհ դէպի Աստուած: Ներդաշնակօրէն համաձայն՝ հայ Սուրբ Հայրերու վարդապետութեան եւ հայրենի աւանդութիւններուն, տննչալով իր ժողովուրդին փոխանցել հոգեկան ու մշակութային արժէքները քրիստոնեայ Արեւմուտքին, Մխիթար, սփանչելի ներկայացուցիչ ու մարիտ ու գործօն սիրոյն Հայրենիքին ու Ազգին, գիտցաւ ըլլալ փարոս եւ ազդանիշ՝ հաւատքի, մշակոյթի եւ գործի ասպարէզներուն մէջ, հակառակ իր ժամանակի անհասկացողութեան եւ փակ կեցութեան՝ ընդդէմ ամէն Էփումնիք առաքելութեան:

Մխիթար, անդդուելի եւ հանճարեղ իրագործող բեղուն արարներու եւ ձեռնարկներու, եղաւ արդարեւ կարապետ Աստուծոյ ծրագիրներուն, որովհետեւ զգաց իրեն հրամայական՝ կոչը տակաւին անուր մնացած ըզմանքին, «Զի ամենեքին մի իցեն» (Յովհ. Ժէ. 21), ինչպէս կը հետեւի այն աղօթքէն, գործին յօրինած է՝ Եկեղեցւոյ միութեան համար²:

Մխիթարի քանդակիչ գործը, հեռու ապարդիւն մնալէ, կանուխէն կը պատրաստէր այն սիրոյ շարժումը՝ համայն Եկեղեցւոյ ծոցին մէջ, որ իր Որդիներուն՝ Մխիթարեան Հայրերու յարատեւ ջանքերով մեզի հասած կենդանի, այնպէս կ'ընէ՝ որ իր Ազգին բոլոր գաւակները, մերօրեայ Քրիստոնեաներու մօտ, զիրար եղբայր զգան, ամենքն ալ հաւասարապէս գաւակներ՝ միեւնոյն երկնաւոր Հօր:

1. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն Հայոց, Տփղիս 1909, էջ 231:

2. ՄԽԻԹԱՐ ԱՔԱՎԱՅԵՐ, Զայն Քրիստոսի եւ հաւատացեալ հոգւոյն, Վենետիկ 1753, էջ 69-82:

Մաղթանքը գոր կ'ուզենք յայտնել այս ուրախ առիթով՝ այն է որ տեսնենք Մխիթարեան վաստակաւոր Միաբանութեան գոյգ միւղերը միշտ աւելի եւս միացած, մինչեւ դառնան գերդ միակ գործօն ընտանիք մը:

Մենք ալ կը բաղձանք՝ ներկայ պատգամով՝ կերպով մը մասնակցիլ երեքհարիւրամեակի հանդիսաւոր տօնակատարութիւններուն, պատուելու համար՝ Եկեղեցւոյ այս պահուն՝ Աստուծոյ երեւելի Մարդը, գիտակից՝ ինչպէս ենք՝ թէ իր ուսուցումը աւելի քան երբեք այժմէական պիտի արձագանգէ բոլոր Եկեղեցիներուն եւ ունկնդիր աշխարհին:

Մաղթելով, ուրեմն, որ տօնակատարութեան այս պատեհութիւնը արթնցնէ եւ աւելի եւս ընդհանրօրէն ծաւալէ աւետարանական յորդորը՝ Քրիստոսի հօտին միութեան, սրտագին կը բաշխենք Մեր Առաքելական Օրհնութիւնը՝ Յովհաննէս Վիպրանտս Ծիրանաւորին, Ն. Ամնպտ. Կէտիկեան Պատրիարքին, Ընդհանրական Արքանքներուն եւ Մխիթարեան գոյգ պատկառելի Հաստատութեանց անդամներուն, եւ բոլոր անոնց՝ որ պիտի մասնակցին գեկուցուած հանդէսներուն:

Կանտուփոյ Դղեակէն, 8 Սեպտեմբեր 1977

ՊՕՂՈՍ Զ. ՊԱՊ

ՅՈՐԵԼԵԱՆԻ ԽՈՀԵՐ

ՄԽԻԹԱՐԻ ԼՈՅՍԸ

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԵՔՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

(1676 - 1976)

«Ձայն հնչեաց աստուածեան. Հա՛պա լոյս եղիցի. եւ եղիւ լոյս արեւի՝ Մխիթար Սարգիսի»:

(Հ. ԵՂԻԱ ԹՈՎՄԱՃԱՆ, Տպրմ. Բ. Էջ 172)

ԵՐԿՆԵՐ ԵՐԿԻՆ ԵՒ ԵՐԿԻՐ

Երկունքն էր բունք մեր Արարատեան երկիրն համօրէն. բոսորաւոյն շամանդաղն էր պատեր հսկայ Մասիսներն ու դաշտերը մեր յուրթի. լիճերը պայծառ՝ ծիրանի շուրջառ էին հազեր. Սօսեաց անտառէն քուրմերն էին իջեր՝ քաղցրանուաղ քնարով ու պարով երգելու երկունքն Հայոց աշխարհի. երկունք լոյսի եւ իմաստութեան, երկունք հաղարազանձ մեր մշակոյթին, երկունք կեանքի, յարաճուն վերելքի ու վերածնութեան:

Դարեր դարերու էին յաջորդեր, ու շատ անգամ բոցեր երկնաշառայլ փռեկեր էին ատրաշէկ երկինքը մեր, եւ բոցերու մէջէն պատանեկիկ մը խարտեաչ սլացեր էր խիզախօրէն մեր հրավառ սարերն ի վեր, մեր ժողովուրդի յաւերժութեան, անոր մշտանորոգ ու անթառամ երիտասարդութեան երփներանգ ծիածանը փռելու անհունին մէջ, դառնալով խորհրդանիշ հայ ցեղի ու մշակոյթի անմահութեան:

Ողին էր ան Հայաստանեայց, հարազատ ծնունդ՝ վեհափառ Մասիսներուն, որ դարերու անվերջ հոլովոյթին մէջ՝ մեր հայազարմ ինքնութեան դարբնոցին տառապանքով կը քանդակուէր ամրակուռ, եւ լուսածին ստինքներէն այն ծիրանի ծովակին՝ կը ծծէր կաթն իմաստութեան, վահագնի լուսաճաճանչ եղէգնուտին բոցերէն ըմպելով խորհուրդն հանճարին յաւերժական հարսնութեան:

Բոցահեր պատանեկիկն այն արփիանման, «զեղապատշաճ եւ անձնեայ, քաջապանդուր, խայտալէն եւ հաստաբազուկ», զերդ ազա-